# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

## 30.05.2018թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-18/2-1» ծածկագրով գնումների համակարգողների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների մատուցման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան <<17>> սեպտեմբեր 2018թ

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Պատվիրատու>>, մի կողմից, և «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Սարգսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 30.05.2018թ կնքված N ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-18/2-1 գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.5 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը **որոշեցին**

1.1 Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցի խումբ 11 և 12-ի համար դասընթացի անցկացման ժամկետները՝ փոխարինել «Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 10-ը» բառերով:

### 2. Այլ պայմաններ

2.1. 30.05.2018թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-18/2-1» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն | «Մաստեր Սթայլ» ՍՊԸ |
| ք. Երևան, Մ. Ադամյան 1 | ՀՀ, ք. Երևան, Սարմենի փող., 1 շենք, |
| ՀՎՀՀ՝ 02629081 | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011017325 | Հ/Հ 163008180909 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ՀՎՀՀ 01571846 |
| ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի պաշտոնակատար | Տնօրեն |
| ------------------ Վ. Հարությունյան | ------------------ Ա. Սարգսյան |
| /ստորագրություն/ | (ստորագրություն |
| Կ.Տ. | Կ.Տ. |